ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «27» նոյեմբերի, 2019թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 43-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով 2018թ. մարտի 23-ի «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ կետով և հիմք ընդունելով հայ-իտալական համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» միջազգային մրցույթին ներկայացված գիտական ծրագրերի հայտերի գնահատման նպատակով ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի նախագահի 04.09.2019 թ. թիվ 32-Ա/Ք հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի նիստի 26.11.2019 թ. թիվ 3 արձանագրությունը, Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհրդի կողմից անցկացված փորձաքննության արդյունքները, ինչպես նաև ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի ցանկը հաստատելու մասին համատեղ որոշումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհրդի կողմից անցկացված գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի

աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական ծրագրերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» միջազգային մրցույթի արդյունքում երաշխավորված գիտական ծրագրերի ֆինանսավորումն սկսել 2020 թ. հունվարի 1-ից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ նախագահի
27.11.2019 թ. N 43-Ա/Ք հրամանի

ՑԱՆԿ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհրդի կողմից անցկացված գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական ծրագրերի

N	Ծածկագիր	Ղեկավար	Բնագավառ	Վերնագիր	Կազմակերպություն
1	19IT-008	Անանիկյան Ներսես Սիրեկանի	Ֆիզիկա և աստղագիտություն	Դասական և քվանտային ոչ լոկալ համիլտոնյանների վիճակագրական ֆիզիկա, փուլային դիագրամներ և վերանորմավորման խումբ	ՀՀ ԿԳՄՍՆ «Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
2	19IT-014	Ավետիսյան Պավել Սեդրակի	Հնագիտություն	Պեղումներից դեպի քաղաք.մշակութային ժառանգության վերլուծության, ամրակայման և արժևորման արդի ինտեգրացված մեթոդները. Քարաշամբի հնագիտական համալիրը	ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
3	19IT-005	Դեմիրխանյան Գագիկ Գևորգի	Ֆիզիկա և աստղագիտություն	Հազվագյուտ հողի իոններով լեգիրված խառը բաղադրությամբ թափանցիկ կերամիկաների սպեկտրադիտական և կինետիկական հատկությունների հետազոտումը՝ լազերային կիրառությունների համար	ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ
4	19IT-009	Հայրապետյան Դավիթ Բորիսի	Ֆիզիկա և աստղագիտություն	Կիսահաղորդչային քվանտային կետերի ֆոտոֆիզիկական հետազոտությունը	ՀՀ ԿԳՄՍՆ ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան